Կին և քաղաքականությունը

Մեկնաբանություն

Մենք չենք կարող թույլ տալ, որ հարատևի անհավասարությունը, քանի որ առանց հավասարության ժողովրդավարությունն ավարտուն չէ:

Մոուդ դե Բյոր-Բուքիքիո

էջ 4

Մայիս-հունիս 2010

Խաղաղությունը մանկական նկարներում ապահովության զգացումն է, երբ կողքիդ են հայրիկն ու մայրիկը, երբ արևը շողում է, ու երկինքն անսահման կապույտ ու ջինջ է...

«Ինչպե՞ս բացատրել մանկիկին, թե ի՞նչ է պատերազմը: Ինչպե՞ս պատասխանել... Պատասխանել հարցին. ինչո՞ւ են այնտեղ սպանում»...

Թեմայի շարունակությունը՝ 2-րդ էջում

Խաղաղության կանանց բանաձևը

Անվճար հավելված

Ասում են՝ համաշխարհային պատմության ընթացքում ընդամենը երկու հարյուր տարի է խաղաղ եղել: Մնացած ընթացքում երկրներն ու մարդիկ հանում ինչ-որ բանի պատերազմել են... Այս իմաստով 20-րդ դարն ամենադաժանն էր. երկու համաշխարհային պատերազմ, մի քանի ցեղասպանություններ, հարյուրավոր զինված հակամարտություններ, որոնց հետևանքով զոհվել են ավելի շատ մարդիկ, քան համաշխարհային ողջ պատմության մեջ եղած պատերազմների ընթացքում:

Ամենևին էլ պատահական չէր, որ նոր դարաշրջանի սկզբում ՄԱԿ-ում ծագեց խաղաղության մշակույթի գաղափարը և դրա հետ մեկտեղ հույսը, որ կանանց ակտիվ մասնակցությունը հակամարտությունների կանխման և կարգավորման գործընթացներում կարող է խաղաղության հասնելու ու պահպանելու յուրօրինակ երաշխիք լինել: Չէ որ կյանք արարելու իրենց բնական առաքելության շնորհիվ կանայք կարող են ավելի նպատակասլաց և արդյունավետ, քան տղամարդիկ, հարթել սուր անկյունները և պաշտպանել իրենց զավակների խաղաղության ու անվտանգության իրավունքը: Այս մոտեցումն իր արտացոլումը գտավ 2000 թ. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ընդունած թիվ 1325 բանաձևում, որը պարտավորեցնում էր պետություններին ավելի ակտիվորեն ներգրավել կանանց հակամարտությունների կանխման ու լուծման, խաղաղարար բոլոր գործընթացներում: Ավելի ուշ երևան եկան այս գաղափարը զարգացնող ՄԱԿ-ի ու եվրոպական այլ փաստաթղթեր: Օրինակ՝ ԵԽԽՎ վերջին բանաձևերից մեկում՝ *«Եվրոպայում չլուծված հակամարտությունների կարգավորման և կանխարգելման գործում կանանց ներգրավվածության մասին»*, որ քննարկվեց ու ընդունվեց բոլորովին վերջերս՝ Խորհրդաժողովի գարնանային նստաշրջանում, անմիջական հողում է արվում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի այդ նույն 1325 բանաձևին: Վեհաժողովի փաստաթղթում, ի դեպ, ափսոսանք է հայտնվում, որ այն տարածաշրջաններում, որտեղ կան հակամարտություններ, կանայք շատ հաճախ են անտեսվում ճգնաժամային կառավարման ու խաղաղ բանակցությունների գործընթացներում, մինչդեռ նրանք կարող են նոր լիցք հաղորդել երկխոսության գործընթացներին և միջնորդական ջանքերին:

1325 բանաձևի ընդունումից անցած տասը տարիները բավարար էին, որ «կանայք, խաղաղություն և անվտանգություն» բառակապակցությունը հասցնի բոլորի համար սովորական դառնալ: Սակայն սովորական են, ավաղ, միայն բառերը, իսկ իրականում աշխարհը բավական հեռու է հակամարտությունների կարգավորման կամ կանխարգելման մեջ կանանց իրական ներգրավվածությունից: Ավելին, նրանք հնավորություն չունեն ներազդելու քաղաքական որոշումների վրա, այդ թվում՝ պատերազմին ու խաղաղությանը վերաբերող, քանզի կանանց երկայացվածությունը որոշումների կայացման մակարդակում, որպես կանոն, խիստ սահմանափակ է: Թեպետ բոլոր միջազգային հարթակներից համառորեն բարձրաձայնվող խաղաղության նոր բանաձևը ուղղակիորեն շաղկապում է գենդերային հավասարությունը ոչ միայն երկրների ու ժողովուրդների տնտեսական բարգավաճման, այլև նրանց անվտանգության հետ:

Մինչդեռ նոր դարը շարունակում է ցավալի ապացույցներ ներկայացնել, որ կանայք՝ երեխաների ու ծերերի հետ մեկտեղ, հակամարտություններից առավել տուժողների շարքերում են, իսկ սեռական բռնությունը նույնիսկ ժամանակակից աշխարհում մնում է պատերազմ վարելու գործիք ու էթնիկ բախումների անբաժանելի մասը: Բավական է հիշատակել միայն Կոնգոյի, Դարֆուրի վերջին դեպքերը...

Կանայք հեռու են մնում նաև բանակցությունների սեղաններից, որտեղ ընդունվում են հակամարտությունների լուծման համար բախտորոշ որոշումներ: Բացառություն չէ նաև ղարաբաղյան կարգավորման գործընթացը, որի շրջանակում տարվող խաղաղ բանակցությունները դեռևս ընթանում են խիստ նեղ ձևաչափով, առաջին դեմքերի մակարդակով: Մնում է հուսալ, որ դրանք հաջողությամբ կպսակվեն ու հաջորդ փուլերում, ի թիվս այլ փորձագետների ու պաշտոնատար անձանց, գործընթացում կընդգրկվեն նաև կանայք: Իսկ առայժմ նույնիսկ Մինսկի խմբի համանախագահների մեջ կին չկա. հավանաբար, այնտեղ էլ կարծում են, որ կովկասցի տղամարդկանց հաշտեցնելը կանանց գործը չէ:

Կանայք քիչ թե շատ ներգրավված են միջխորհրդարանական պատվիրակություններում, եվրոպական տարբեր կառույցների կազմում, սակայն իրավիճակն այնպիսին է, որ այդ հարթակներում նրանք տղամարդկանց հետ մեկտեղ պարտադրված են տեղեկատվական պատերազմների կանոններով խաղալ...

Մնում է հասարակական կազմակերպությունների, այսպես կոչված ժողովրդական դիվանագիտության մակարդակը, սակայն դա էլ, ցավոք, այսօր գործունակ չէ: Եթե մի քանի տարի առաջ՝ 2001-2005 թթ., Հայաստանի ու Ադրբեջանի կանանց կազմակերպությունների ներկայացուցիչները կապեր էին պահպանում իրար հետ, երկուստեք հանդիպումներ կազմակերպում, ապա այսօր նման շփումներ չկան: Տարածաշրջանում լսվում են միայն Ադրբեջանի ղեկավարության ռազմատենչ կոչերը, և այդ ֆոնի վրա նույնիսկ այն փոքր քայլերը, որոնք նախկինում հաջողվում էր անել երկու երկրների հասարակական կազմակերպություններին, այսօր անիրական են թվում:

Թերթում եմ 2001-ի աշնանը Ծաղկաձորում Ադրբեջանի կանանց կազմակերպության հայտնի առաջնորդի հետ իմ զրույցի գրառումները ու չեմ հավատում, որ նրանք եկել էին մեզ մոտ, ու մենք միասին փորձում էինք դեպի խաղաղություն տանող արահետներ գտնել: *«Մինչև վերջերս, չնայած մեր համալսարանական կրթության ու գիտական կոչումներին՝ մենք նախընտրում էինք միմյանց չբարևել: Սակայն մենք մոտեցել ենք այն սահմանագծին, երբ կարող ենք սկսել խոսել: Հետևում են մնացել արցունքները, վիրավորանքները, փոխադարձ մեղադրանքները, այն ամենը, ինչով սահմանափակվում էին մեր հարաբերությունները: Խոսք չէր կարող լինել այն մասին, որ ես՝ ադրբեջանցի կին, հանկարծ հայտնվեի Հայաստանում անցկացվող կոնֆերանսում: Ի դեպ, դուք էլ հազիվ թե կարողանայիք ենթադրել, որ մենք ձեզ կհրավիրենք Բաքու, և դուք կգաք: Սակայն, ինչպես տեսնում եք, մեր կյանքում ամեն ինչ հնարավոր դարձավ...»*

Ավաղ, այսօր այդ ամենը նորից անհնար է դարձել: Եվ չնայած այն ժամանակ էլ մեզնից ոչ ոք չէր չափազանցում մեր հանդիպումների նշանակությունը, սակայն այն փաստը, որ կանայք կարողանում էին և ուզում էին միմյանց հետ խոսել, արդեն իսկ հույս էր ներշնչում: *«Եկեք ինքներս մեզ չխաբենք: Ցավոք, հասարակական կազմակերպությունները որոշելու իրավունքով օժտված չեն, նրանք կարող են միայն արտահայտել իրենց կարծիքը: Սակայն դա նույնպես կարևոր է. որովհետև իշխանությունները համենայն դեպս կիմանան, թե ի՞նչ է մտածում ժողովուրդը, ինչ են մտածում կանայք: Ու ընդհանրապես, ո՞ր խելամիտ կինը կասի, թե պատերազմ է ուզում»,-* վերհիշելով այսօր իմ զրուցակից կնոջ այս խոսքերը՝ ես, չգիտես ինչու, հավատած եմ, որ նա հիմա էլ է մտածում նույն կերպ, ինչպես այն ժամանակ...

Թամարա Հովնաթանյան

Փաստաշար

«Կապույտ բերետավորների» 20%-ը կանայք կլինեն

ՄԱԿ-ը հուսով է, որ 2014-ին իր խաղաղարար-ոստիկանների շարքերում կլինեն 20% կանայք: Այս մասին ՄԱԿ-ի կենտրոնակայանի մամուլի ասուլիսում հայտարարել է ՄԱԿ-ի գլխավոր ոստիկան-խորհրդական **Անն-Մարի Օրլերը:**

Այսօր մոլորակի տարբեր մայրցամաքներում ծավալվել են 12 խաղաղարար և 5 հատուկ քաղաքական առաքելություններ: Դրանցում ծառայում է աշխարհի տարբեր անկյուններից 13680 ոստիկան: «Կապույտ բերետավորների» մեջ 1173-ը կանայք են: Սա ՄԱԿ-ի ոստիկանների ընդհանուր թվի 8,5%-ն է:

Կին-ոստիկանները միավորվել են

Մեկ տարի առաջ՝ 2009-ի հունիսին, Հայաստանում ստեղծվեց Ոստիկանությունում ծառայող կանանց խորհուրդը: Խորհրդի ղեկավար ընտրվեց Քրեական հետախուզության երրորդ վարչության պետի տեղակալ, գնդապետ Նելլի Դուրյանը:

Այսօր Հայաստանի ոստիկանության կառուցվածքում ծառայում են շուրջ 2500 կանայք, նրանցից 524-ը (10%) սպա են, 283-ը (6%)՝ շարքային, մյուսները՝ տեխնիկական ու քաղաքացիական աշխատողներ: Նշենք, որ ոստիկանությունում անցկացվող լայնածավալ բարեփոխումների ծրագրում ներառված է նաև գենդերային բաղադրիչը: ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ ՀՀ ոստիկանության համար մշակվելու է գենդերային հավասարության ռազմավարություն: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ կանանց թվի ավելացումը ոստիկանների շարքերում, այդ թվում նաև՝ գերատեսչության ղեկավարությունում, նպաստում է իրավապահ մարմինների նկատմամբ բնակչության վստահության բարձրացմանը:

Զանգվածային բռնաբարություններ Ղրղզստանի հարավում

Ղրղզստանի հարավում ազգամիջյան բախումների ընթացքում եղել են նաև զանգվածային բռնաբարություններ: Բժիշկների ու ականատեսների խոսքով՝ դրանց զոհ են դարձել նաև հղի կանայք ու մանկահասակ աղջիկներ: Ոչ բոլոր զոհերն ու նրանց հարազատներն են մտածելակերպի առանձնահատկությունների պատճառով պատմում տեղի ունեցածի մասին՝ նույնիսկ հայտնվելով անվտանգության մեջ»,- հաղորդում է «Եվրոնյուզը»:

«Ամբոխը հարձակվեց այս 16-ամյա աղջկակի վրա հենց հոր աչքի առաջ: Նա բղավում էր, իսկ երբ սկսեցին ոտքերով հարվածել գոտկատեղին, անգիտակից ընկավ»,- պատմում է զոհի ազգականներից մեկը: Հիշեցնենք, որ ղրղզների և ուզբեկների միջև էթնիկ բախումներ սկսվեցին հունիսի 11-ի գիշերը Ղրղզստանի հարավում՝ Օշում և Ջալալաբադում: Հակամարտության մեջ է ներգրավված շուրջ մեկ միլիոն մարդ, հարյուր-հազարավորներ դարձել են փախստականներ:

Պատերազմի դեմքը

Թվում է՝ պատերազմում կանանց մասին այնքան գրքեր են գրվել, այնքան ֆիլմեր նկարահանվել, որ ամեն ինչ արդեն ասվել է: Սակայն, ըստ էության, հետազոտողներն ու լրագրողներն այս թեմային ձեռնամուխ եղան մեծ ուշացումով: Այսօր քչերը գիտեն, թե Հայրենականից հետո մի շրջան կար, երբ պատերազմն անցած կանայք թաքցնում էին իրենց մարտական պարգևները և աշխատում էին չխոսել այն մասին, որ կռվել են, քանի որ դա հաճախ խանգարում էր անձնական կյանքին... Պետությունն էլ կին վետերաններին կարծես չէր նկատում: Պատերազմին մասնակցած կանանց դաժան ճակատագրերի մասին լիարժեք խոսվեց միայն 60-ականներին, և այս առումով բեկումնային դարձավ Բորիս Վասիլևի «Իսկ արշալույսներն այստեղ խաղաղ են» հայտնի վիպակը...

«Կինը և պատերազմը» թեման մի առանձնահատկություն ունի. այն ձգում է իր մանրամասներով: «Երբ կանայք խոսում են պատերազմի մասին, նրանց պատմությունները չունեն կամ գրեթե չունեն այն, ինչի մասին մենք սովոր եք կարդալ կամ լսել. թե ինչպես են մարդիկ հերոսաբար հաղթում կամ պարտվում, ինչ տեխնիկա է եղել, ինչ գեներալներ: Կանանց պատմություններն ուրիշ են... «Կնոջ» պատերազմն իր գույներն ունի, իր բույրը, իր մեկնաբանությունը և զգացմունքների իր տարածքը: Իր բառերը...»... Սա Սվետլանա Ալեքսիևիչի «Պատերազմի ոչ կանացի դեմքը» գրքի առաջաբանից է, որտեղ հեղինակը փորձում է բացատրել՝ ինչո՞ւ հանկարծ որոշեց պատմել մեկ այլ, պատերազմի կանանց պատմությունը...

Գիրքը հրապարակվեց 1985-ին: Ու հազիվ թե այն ժամանակ ինչ-որ մեկի մտքով անցներ, որ ընդամենը մի քանի տարի անց մեկ այլ սերունդ ևս կհայտնվի կրակի առաջին գծում, և մենք կտեսնենք մեկ այլ՝ Արցախյան պատերազմի «ոչ կանացի դեմքը»... կհամակվենք մայրերի, կանանց ու երեխաների ցավով ու արցունքներով, կցնցվենք Սումգայիթի, Բաքվի, Մարաղայի փախստականների դժնի պատմություններից, կխոնարհվենք իրենց տունն ու երեխաներին զենքով պաշտպանած կանանց սխրանքի առջև, անուն առ անուն կհիշենք ուրիշի կյանք հերոսաբար փրկող բժիշկներին ու բուժքույրերին... Եթե պատերազմի մասին կանանց հիշողությունների մեջ անտեսենք տեղի ու ժամանակի վկայակոչումները, ապա տարբերությունները կտարրալուծվեն, կմնան սոսկ «ցավի և հիշողության այրված կիլոմետրերը», իսկ հարցը՝ ե՞րբ է դա եղել՝ 40-ականների՞ն, թե՞ կես դար անց՝ 90-ականներին՝ երկրորդ պլան կմղվի... Գլխավորը, որ դա նորից չկրկնվի...

...Ուզում եմ այնպիսի մի գիրք գրել պատերազմի մասին, որ պատերազմից սիրտդ խառնի, իսկ միայն դրա մասին միտքը զզվելի լինի: Ահավոր: Նույնիսկ գեներալները սրտխառնուք զգան.. Իմ տղամարդ ընկերները (ի տարբերություն ընկերուհիների) շշված են «կնոջ» նման տրամաբանությունից: Ու ես նորից լսում եմ «տղամարդու» փաստարկ. «Դու չես եղել կռվում»: Իսկ գուցե դա լավ է. ինձ ծանոթ չէ ատելության մոլուցքը, ես սովորական տեսողություն ունեմ: «Ոչ պատերազմական» տեսողություն»...

...Ինչի մասին էլ կանայք խոսեն, նրանց մեջ շարունակ մի միտք է... պատերազմը «նախ և առաջ սպանություն է, իսկ հետո՝ ծանր աշխատանք: Իսկ հետո «ու պարզապես սովորական կյանք. երգում էին, սիրահարվում... կենտրոնում միշտ այն է, որ անտանելի չես ուզում մեռնել: Իսկ էլ ավելի անտանելի է՝ որ չես ուզում սպանել, քանի որ կինը կյանք է տալիս: Պարգևում է: Երկար պահում է իր մեջ, փայփայում: Ես հասկացա, որ կանանց համար ավելի դժվար է սպանել...

«Մենք՝ տղամարդիկ, մեղքի զգացում ունեինք, որ աղջիկները կռվում են, ու այն իմ մեջ մնացել է... Ահա մի դեպք: Մենք նահանջում ենք: Աշուն է, օրերով անձրև է գալիս: Ճամփեզրին ընկած է մի սպանված աղջիկ... Սանիրահանգիչը... Դա մի գեղեցիկ աղջիկ էր, երկար ծամերով, ու այն լրիվ ցեխի մեջ է... Ու այնքան անբնական է այս մահն ու այն, որ այս կինն այստեղ է, մեզ հետ, այս սարսափի, ցեխի, քաոսի մեջ: Ես շատ մահեր եմ տեսել, բայց հիշում եմ սա...»

«Արժի՞ արդյոք այս մասին այսօր հիշել: Երբ լսեցի, որ մեր բուժքույրերը, շրջապատման մեջ ընկնելով, վիրավոր մարտիկներին պաշտպանելիս կրակում էին, քանի որ վիրավորները մանկան պես անօգնական են, ես դա հասկանում էի, բայց երբ երկու կին սողում են ինչ-որ մեկին դիպուկահարով սպանելու, սա այնուամենայնիվ «որս» է... Ես դրա նմանի հետ գուցե «ռազվեդկի» գնայի, բայց հետը չէի ամուսնանա... Պատերազմը տղամարդու գործ է»:

...Մի քանի անգամ ստանում էի խմբագրին ընթերցելու համար ուղարկված տեքստը՝ գրությամբ՝ «Մանրուքների մասին չարժի... Գրի՛ր մեր մեծ հաղթանակի մասին...» Իսկ ինձ համար ամենագլխավորը «մանրուքներն» են՝ շիլայի ու ապուրի տաք կաթսաներ, որոնք ոչ ոք չի ուտելու, քանի որ մարտից հետո հարյուր մարդուց վերադարձել են ընդամենը յոթը. կամ այն, թե ինչպես պատերազմից հետո չէին կարողանում շուկա գնալ ու նայել մսի կարմիր շարքերին... Նույնիսկ կարմիր չթին... «Ախ, սիրելիս, արդեն քառասուն տարի է անցել, իսկ մեր տանը դու կարմիր ոչ մի բան չես գտնի: Պատերազմից հետո ես ատում եմ կարմիրը»:

«Ես մինչև Բեռլին բանակի հետ հասա... Վերադարձա մեր գյուղ երկու Փառքի շքանշաններով ու մեդալներով: Ապրեցի երեք օր, իսկ չորրորդ օրը մայրս ինձ հանում է անկողնուց ու ասում. «Աղջիկս, ես քեզ համար մի փոքրիկ կապոց եմ պատրաստել: Գնա՛... Դու դեռ երկու փոքրիկ քույրեր ունես: Ո՞վ նրանց հետ կամուսնանա: Բոլորը գիտեն, որ դու չորս տարի եղել ես ռազմաճակատում, տղամարդկանց հետ»... Բայց հոգուս ձեռ մի՛ տվեք: Ավելի լավ է՝ գրե՛ք մյուսների նման իմ պարգևների մասին...»

«Ես գնդացրորդ էի: Այնքան մարդ եմ սպանել... Պատերազմից հետո երկար ժամանակ վախենում էի ծննդաբերելուց: Երեխա ունեցա, երբ հանգստացա: Յոթ տարի անց... Սակայն մինչև հիմա ոչինչ չեմ ներել: Ու չեմ ների: Ինձ թվում է՝ ես երկու կյանք եմ ապրել. մեկը՝ տղամարդու, մյուսը՝ կնոջ...»

«Ես չեմ սիրում խաղալիք զենքեր, մանկական խաղալիք զենքեր: Տանկեր, ինքնաձիգներ... Ո՞վ է դրանք հորինել:Հոգիս տակնուվրա են անում... Ես երբեք չեմ գնել ու չեմ նվիրել երեխաներին այդպիսի խաղալիքներ: Ո՛չ իմ երեխաներին, ո՛չ ուրիշների: Մի անգամ մեկը տուն ռազմական օդանավ բերեց և պլաստմասսայե ինքնաձիգ: Իսկույն աղբամանի մեջ նետեցի... Անհապաղ: Քանի որ մարդկային կյանքը այնպիսի պարգև է... Մեծագույն պարգև: Ինքը՝ մարդն այդ պարգևի տերը չէ...»

«Չի կարող լինել մի սիրտ ատելության համար, իսկ երկրորդը՝ սիրո: Մարդը մեկ սիրտ ունի, ու ես միշտ մտածել եմ այն մասին. ինչպե՞ս փրկել իմ սիրտը»:

«Ասում են՝ զենքը՝ ինքնաձիգը, ատրճանակը, գեղեցիկ է, դրա մեջ բավական շատ մարդկային միտք կա, կիրք, իսկ ինձ համար այն երբեք գեղեցիկ չի եղել: Ես տեսել եմ, թե տղամարդիկ ի՜նչ հիացմունքով են նայում լավ ատրճանակին, սա ինձ համար անհասկանալի է: Ես կին եմ»:

«Հիշում եմ՝ շատ էի վախենում, որ եթե ինձ սպանեն, գեղեցիկ տեսք չեմ ունենա: Թաքնվում ես գնդակոծությունից և ոչ այնքան մտածում, որ քեզ չսպանի, այլ թաքցնում ես դեմքդ, որպեսզի չայլանդակվես: Ռազմաճակատում ոչինչ կնոջն այնքան չէր սարսափեցնում, որքան խեղանդամ դառնալու հնարավորությունը»...

Ս.Ալեքսիևիչ
«Պատերազմի ոչ կանացի դեմքը» գրքից

...Պատերազմի ժամանակ ամեն օր աղոթում էի Աստծուն, որ տեսնեմ Հաղթանակի օրը: Ու երբ ազատամարտիկներից մեկը մոտեցավ ինձ ու ասաց՝ «Շնորհավորում եմ, բժի՛շկ, պատերազմն ավարտվել է», ես միանգամից չհավատացի իմ երջանկությանը: Իսկ երբ տուն վերադարձա, աղջիկս մի քանի ամիս շարունակ ամեն բառից հետո շարունակ «մամ» էր ասում: Հասկացա, որ երեխան ուղղակի կարոտել էր այդ բառն ասելուն:

...Մի թուրք հղի կնոջ կյանքը փրկեցի, տարա Ստեփանակերտ, թողեցի նրան ու հետ եկա: Քելբաջարի գրավման ժամանակ էր: Երեք օր հետո, երբ կրկին մի ծանր վիրավորի տեղափոխեցի հոսպիտալ, մտածեցի՝ մտնեմ տեսնեմ, թե թուրքս ի՞նչ եղավ: Բուժքույրերից մեկը կանչեց. «Ա՛, դոխտուր, եկ, է, եկ, թուրքդ ազատվել ա, տղա ա պերալ: Անունը հի՞նչ տինինք»: Ասացի՝ դրեք Արցախ: Հենց մտա հիվանդասենյակ, այդ խեղճ թուրք կնոջ աչքերը վախից դուրս թռան. դե, ես շատ էի զինված, ավտոմատ, ավտոմատի 8 մթերանոց օդազրահի մեջ, երկու նռնակ, ատրճանակ և ռացիա: Իմ ներս մտնելուն պես կինը ձեռքը գցեց և մանկան բարուրը սեղմեց կրծքին: Ես էլ մայր եմ, ամեն ինչ հասկացա ու ժպտացի նրան: Ձեռքս դրի ծննդկանի գլխին ու թուրքերեն ասացի, որ անունն Արցախ ենք դրել: Ուզում էի մի լավ բան անել նրա համար, բայց զենքից բացի մոտս ոչինչ չկար: Հետո հիշեցի, որ երեք օր առաջ օդանավակայանի փոքր շաքարներից էին ինձ տվել, հանեցի, դրեցի սեղանին ու ասեցի. «Վերցրու, թեյով կխմես, տղայիդ համար կաթ կլինի»: Այլևս չտեսա նրանց:

...Չորս անգամ վիրավորվել էի: «Փառք Աստծո, ծանր չեմ վիրավորվել: Միշտ Աստված էի կանչում՝ միայն ձեռքերիս ու ոտքերիս բան չլինի ու մեկ էլ դեմքիս: Տղաները կատակում էին, թե՝ մի՛ անհանգստացիր, սպին զարդարում է: Ես ասում էի՝ այո՛, բայց ոչ կնոջը:

...Երբ կինը տղամարդու կողքին է, տղամարդն իրեն ավելի հզոր ու վստահ է զգում: Ըստ իս՝ կնոջ ներկայությունը ամենավախկոտ տղամարդուն անգամ արծիվ է դարձնում:

Զինվորական բժիշկ, մայոր Սիդա Սերոբյանի հուշերից

...Տղամարդիկ քաջ գիտակցում էին, որ թիկունքում իրենց կանայք ու երեխաներն են, հետդարձի ճանապարհ չկա, պետք է կռվեին հայ հերոսին վայել: Դրա համար էլ մենք հրաժարվեցինք մեկնել մարտական գործողությունների գոտուց: Ու դա ճիշտ էր: Մեր հաղթանակում գլխավորն այն էր, որ ժողովուրդը, կանայք ու երեխաները մնացին հայրենի հողում, չփախան, ու բոլորը միասին դիմակայեցին...

...Այն ամենից հետո, ինչ կատարվեց իմ կյանքում, հասկացա, որ այլևս չեմ կարող ապրել տնային տնտեսուհու սովորական կյանքով, որ միայն տանը լինելը, որտեղ ամեն ինչ հիշեցնում է որդուս, թոռանս մասին, տանջալի է, ու ես մեկնեցի ճակատ:

...Կանանցից մեկը թաքուն կերակրում էր թուրք գերուն, իսկ ես զարմացած ու հիացած եմ նրա հոգու վեհությամբ. ընդամենը հինգ ամիս առաջ նրանք սպանել էին նրա ամուսնուն: Ու նա ճակատ էր մեկնել ամուսնու վրեժը լուծելու...

«Կանայք ու զինված հակամարտությունը: Պատերազմը Ղարաբաղում» գրքից, 2000 թ.
Արմինե Մխիթարյան, Մարիամ Օհանյան

«Չէի կարող այդ օրհասական պահին հանդիսատեսի դերում լինել»

Ռոզալիա Աբգարյանը այն 10 հազար հայուհիներից մեկն էր, որ 1941-ին մեկնեց ռազմաճակատ: Հարցին՝ ինչո՞ւ գնացիք պատերազմ, նույն տասնութամյա աղջկա վճռականությամբ, պատասխանում է. «Չէի կարող այդ օրհասական պահին հանդիսատեսի դերում լինել»:

...«1941-ի հունիսին դեռ նոր էի դպրոցն ավարտել և պատրաստվում էի վայելել ավարտական հանդեսս, երբ պատերազմի մասին լուրը ցնցեց բոլորին և մեկընդմիշտ ու անդառնալիորեն փոխեց կյանքս: Ժամեր անց հավաքվեցինք դպրոցի բակում և առանց վարանելու, որպես կամավորներ՝ ներկայացանք զինկոմիսարիատ: Սկզբում ինձ ընդգրկեցին ռադիոհեռագրողների դասընթացներին, իսկ 41-ի նոյեմբերին մեկնեցի ռազմաճակատ»,- պատմում է Երկրորդ համաշխարհային պատերազմի վետերան, ավագ սերժանտ Ռոզալիա Աբգարյանը:

...«Կամավորական ջոկատներով լի մեր գնացքը դեռևս ճանապարհի կեսին ռմբակոծեցին գերմանական ինքնաթիռները, բազմաթիվ զոհեր տվեցինք, ինքս էլ գլխից ծանր վիրավորվեցի և ուղարկվեցի Վորոշիլովգրադ բուժման: Այս քաղաքի հետ շատ հիշողություններ են կապված, կարելի է ասել՝ մարտական ուղիս սկսել եմ այստեղից՝ ընդգրկվելով 88-րդ կապի առանձին գնդում»:

...«Երբ անգիջում պայքարում ես հայրենիքիդ ազատության համար՝ անտեսելով այն փաստը, որ ամեն նոր օրը կարող է վերջինը լինել քո կյանքում և անցնում պատերազմական ողջ թոհուբոհի միջով և ականատեսն ես լինում բաղձալի հաղթանակի ցնծությանը, հասկանում ես, որ ջանքերդ ու մարդկային հազարավոր զոհերն ապարդյուն չէին»,- հուզված ձայնով, արցունքներն աչքերին նա մեկ առ մեկ վերհիշում և ամենայն մանրամասնությամբ վերարտադրում է Դոն գետի ափին, Լեհաստանում, Հունգարիայում, Նովոռոսիյսկի մատույցներում և Չեխոսլովակիայում տեղի ունեցած կատաղի մարտերը ու իր զոհված մարտական ընկերներին:

Պատերազմից մնացած բացառիկ դրական իրադարձություններից էր ապագա ամուսնու հետ հանդիպումը ռազմաճակատում: Զորացրվելուց հետո վերադարձել է Հայաստան, ամուսնացել ռազմաճակատում հանդիպած երիտասարդի հետ, այնուհետև մանկավարժական ինստիտուտում ռուսաց լեզվի և ռուս գրականության մանկավարժի կրթություն ստացել և կյանքի 56 տարիները նվիրել մանկավարժի նվիրական գործին: Ռոզալիա Աբգարյանը երկու տաղանդաշատ որդիների մայր և հոգատար տատիկ է: Որդիներից կրտսերը ճանաչված օդաչու է, մյուսն էլ՝ քիմիական գիտությունների թեկնածու:

Արմինե Հովհաննիսյան

Մարտի դաշտում

. Արդեն Ք.ա. 4-րդ դարում Աթենքում և Սպարտայում հունական զորքերում կռվում էին կանայք: Ավելի ուշ նրանք մասնակցեցին Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներին:

. Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում կանանց արդեն վերցնում էին Թագավորական ռազմաօդային ուժեր, ձևավորվեց Թագավորական օժանդակ կորպուս և ավտոտրանսպորտի կանանց լեգեոնը՝ մոտ 100 հազար մարդով:

. Ռուսաստանում, Գերմանիայում, Ֆրանսիայում բազմաթիվ կանայք նույնպես սկսեցին ծառայել զինվորական հոսպիտալներում ու սանիտարական գնացքներում: 1917-ին ժամանակավոր կառավարության օրոք Ռուսաստանում ձևավորվեցին կանանց գումարտակներ:

. Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ կանայք ծառայում էին շատ երկրներում. անգլիական բանակում՝ 225 հազար, ամերիկյանում՝ 450-500 հազար, գերմանականում՝ 500 հազար: Խորհրդային բանակում մարտնչում էին շուրջ 1 միլիոն կանայք, այդ թվում՝ 10 հազար հայուհիներ:

. Պատմիչները վկայում են, որ հայոց պատմության ողջ ընթացքում հայուհիները որպես կամավորներ մասնակցել են ազգային-ազատագրական կռիվներին: Հայ կնոջ խիզախության խորհրդանիշն է Սոսե Մայրիկի անունը:

. Արցախյան պատերազմին մասնակցել են շուրջ 600 կանայք, որոնցից 18-ը զոհվել են մարտի ժամանակ, 87-ը՝ դարձել հաշմանդամ:

Շնորհակալություն ենք հայտնում «Անմար կրակներ» ռազմահայրենասիրական բարեգործական կազմակերպության նախագահ Ալլա Բարխուդարյանին՝ ֆոտոարխիվի նկարները տրամադրելու համար:

Պատերազմի դեմքը

«Ռազմի դաշտում բոլորը հավասար են»...

Երբ ասում են՝ պատերազմը կնոջ գործ չէ, տիկին Քնքուշը նեղանում է ու կրկնում իր հերոս դստեր՝ Ռուզաննա Եսայանի խոսքերը. *«Ռազմի դաշտում բոլորը հավասար են, անկախ նրանից՝ կին ես թե տղամարդ: Եթե հայրենիքդ վտանգի մեջ է, բոլորը պետք է գնան կռվի դաշտ»*: Ռուզաննայի մասին այսօր լեգենդներ են պատմում, շատերն են տեսել նրա սխրագործությունները, շատերի կյանքն է փրկել: Պատմում են, որ ադրբեջանցիները Ռուզաննայի համար 3 միլիոն գլխագին էին սահմանել: Նա ընդամենը 24 տարեկան էր, երբ նրա սիրտը դադարեց բաբախել...

Մոր հիշողությունները աղջկա մասին բազմաթիվ են: Հիշում է ամեն ինչ՝ առաջին քայլերը, խոսելը, խաղերն ու ներկայացումները, որ կազմակերպում էր բակում: Մայրը պատմում է, որ աղջկա վրա մեծ ազդեցություն է ունեցել Պոլսից գաղթած տատը: «1915 թ. ցեղասպանության ժամանակ թուրքերը իր ծնողներին նրա աչքի առաջ սպանել էին: Տատը հաճախ էր պատմում կոտորածների, թուրքերի վայրագությունների, գաղթականների դաժան ճակատագրի մասին: Ռուզաննան ամեն անգամ սրբում էր տատի արցունքներն ու ասում. «Տա՛տ, դու մի՛ լացիր, ես կմեծանամ ու քո վրեժը կլուծեմ»,- հիշում է տիկին Քնքուշը:

80-ականների վերջին Ռուզաննան մեկնեց Ռուսաստան՝ բժշկական կրթությունը Լենինգրադում շարունակելու: «*1988-ին ոգևորված վերադարձավ Հայաստան, մասնակցում էր բոլոր հանրահավաքներին, երթերին: Մի տեսակ վախենում էի, մեջս անհանգստություն կար, բայց թաքուն հպարտանում էի նրանով»*,- հիշում է մայրը:

Պատերազմի տարիներին Ռուզաննան աշխատում էր հիվանդանոցում: Առաջին անգամ Ղարաբաղ գնաց ծնողներից թաքուն: Ձենք-զինամթերք էին տանում, վիրավոր տղաներին, զոհվածներին բերում Երևան: *«Երբ իմացանք, որ մեկնել է Ղարաբաղ, բարկացանք ու արգելեցինք նորից գնալ: Եղբայրներն ասացին, որ իրենք կգնան ու քրոջ փոխարեն կկռվեն, բայց Ռուզաննան արգելեց: Այդ սարսափը տեսել էր ու միայն կրկնում էր՝ վերադարձի ճանապարհ չկա»:*

Պատերազմի դաշտում Ռուզաննան դարձել էր անփոխարինելի: Վրանում բուժկետ սարքեց, կարգ ու կանոն մտցրեց: Տղաների հետ խիստ էր, զինվորները հարգում էին այդ խստությունը, վիրավորների հետ ջերմ էր ու հոգատար: Մարտական ընկերները պատմում էին, որ պատերազմի ժամանակ Ռուզաննան վերափոխվում էր, մի տեսակ ուժ էր ստանում, անվախ առաջ էր գնում՝ իր հետևից տանելով ջոկատը:

1992-ին Ղարաբաղ գնալուց առաջ մորը խոստացավ, որ այլևս չի գնա. «Ասաց՝ վերջին անգամ եմ գնում, իմ կարիքն ունեն, հետո միշտ հետդ կլինեմ: Այս առումով էլ էր ճշտապահ, վերջին անգամ գնաց ու էլ չվերադարձավ»:

1992-ի դեկտեմբերի ամենաթեժ մարտերն էին, հայկական կողմը կորուստներ էր տալիս: Ուղտաձոր գյուղի մոտ պաշտպանական կռիվների ժամանակ հայկական կողմի յոթ զինվորներ վիրավորվեցին: Անհրաժեշտ էր նրանց հասցնել հիվանդանոց, սակայն Ուղտաձորը Հադրութին միացնող միակ ճանապարհը թշնամու կրակի տակ էր: Շտապ օգնության մեքենայի վարորդն առաջարկում է առավոտյան գնալ, բայց Ռուզաննան առարկում է. մինչև առավոտ չեն դիմանա: «Մահվան ճանապարհ» անունը վաստակած այդ արահետին թշնամու արկից պայթեց նաև շտապ օգնության մեքենան.. «Մահվան ճանապարհով» նրանք գնացին անմահության:

Այսօր տիկին Քնքուշն իր ողջ սերը նվիրում է թոռնուհուն՝ Ռուզաննային: Հորաքրոջը չի տեսել, բայց հպարտանում է նրանով: «Երևի Աստծո ցանկությունն էր, որ փոքրիկ Ռուզաննան էլ ծնվեց նոյեմբերի 17-ին: Արտաքինով շատ նման է հորաքրոջը, նրա նման անվախ է ու հայրենասեր»,- ասում է տիկին Քնքուշը:

Ռուզաննայի սենյակն այսօր վերածվել է փոքրիկ թանգարանի: Լուսանկարներ, գեղանկարներ, Ռուզաննայի անդավաճան ընկերը՝ զենքը... Մեդալներն ու պատվոգրերը շատ են՝ Երկրորդ աստիճանի մարտական խաչ, «Արիության համար» մեդալ, 1992-94 թթ. մարտական գործողությունների մասնակցության կրծքանշան ու էլի բազմաթիվ մեդալներ, որոնք տիկին Քնքուշը պահում է մեծագույն խնամքով:

Ռուզաննան պայքարում էր ու միաժամանակ բանաստեղծություններ գրում՝ երազանքները հանձնելով թղթին: 1995 թ. լույս տեսավ նրա բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Հիշատակի խաչքար»:

Ռուզաննայի սխրագործությունները չմոռացան հայրենի քաղաքում՝ Էջմիածնում: 1997թ. փողոցը, ուր ապրում էր նա, անվանափոխվեց Ռուզան Եսայան անունով:

Նրան հիշում են նաև հարազատ դպրոցում: Ռաֆայել Պատկանյանի անվան 9-րդ դպրոցը յուրաքանչյուր տարի նոյեմբերի 17-ին կազմակերպում է հիշատակի օրեր: «Ռուզան Եսայան» անունն է կրում նաև դպրոցի երիտասարդական միությունը:

Հասմիկ Հարությունյան

Ղարաբաղի Ժաննա դ՛Արկը

Ժաննա Գալստյան, ղարաբաղյան բանակի գնդապետ, պատերազմից հետո եղել է ԼՂՀ նախագահի խորհրդական, 2000 թվականից՝ ԼՂՀ խորհրդարանի պատգամավոր, 2007 թվականից ղեկավարում է խորհրդարանի պաշտպանության, անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովը:

...Ուշքի գալով ջարդերի մասին լուրից հետո Ժաննան որոշեց ընդմիշտ թողնել թատրոնը: Հիմա դրա ժամանակը չէ: Ո՞ւմ են պետք «բեմի լույսերը» այն ժամանակ, երբ Սումգայիթի բակերում կենդանի ջահերի պես այրվում են լրիվ անմեղ մարդիկ: Ստեփանակերտի կենտրոնական հրապարակը դարձավ ինքնաբուխ հանրահավաքների հավաքատեղի: Հռետորները շատ էին. խորհրդային իշխանության տարիներին շատ բան էր կուտակվել... Դերասանական կախազգացումը Ժաննային հուշում էր. ոչ մի հիստերիա, նզովք ու չարություն: Այլապես ժողովրդի վաղուց ի վեր փայփայած երազանքը՝ ազատությունը, հարբած բանվորի մի կերպ հարմարեցրած բեմական դեկորացիայի պես փուլ կգա... Արժանապատվություն. նա այդ մասին ավելի ու ավելի հաճախ էր մտածում՝ ահա դեպի ազատություն տանող իսկական ճանապարհը: «Երբ նրանք, ովքեր լեռան մյուս կողմում սպանում էին ու բռնանում, մի՞թե նրանց արդարությունն էր մղում,- ասում էր Ժաննան բարեկամներին: - Պետք չէ նրանց հավասարվել: Նույնիսկ մտքում...»:

...Նրան լսում էին հիացած: Մյուս հռետորների շուրթերից բազմիցս կրկնված բառը՝ «Միացում», Ժաննայի շուրթերում օվացիաներ էր առաջացնում: Ու մի բան էլ. նա երբեք չէր օգտվում բարձրախոսից: Խոսում էր սովորական ձայնով, իսկ լսում էին բոլորը: Ականատեսները հիշում են, որ հրապարակում Ժաննայի հայտնվելը մարդկանց վրա մոգական ազդեցություն էր ունենում, նրանց աչքերում հայտնվում էր ուրախ վճռականություն, բոլորը ժպտում էին իրար ու ասես շտկում ուսերը. ու այդ տրամադրվածությունը, այս վերելքը ստիպում էին հավատալ իրենց գաղափարների լրջությանն ու անխուսափելիությանը:

...«Ո՞վ էի ռազմաճակատում, զինվոր, իհարկե: Սովորեցի ինքնաձիգին՝ կնոջ զարդապայուսակից ոչ վատ: Քանիսի՞ն է էն աշխարհ ուղարկել: Կարծում եմ՝ ահագին: Հատկապես հիշում եմ այն ճակատամարտը, երբ թշնամու կողմից կռվում էին Շամիլ Բասաևի չեչենները: Կատաղի մարտ էր, քիչ էր մնում խլանայի հրաձգությունից: Չեչենները ուժեղ կռվողներ են, ու լեռնային տեղանքը, ինքներդ եք հասկանում, նրանց համար խոչընդոտ չէր: Բայց միևնույն է, Աստված մեր կողմն էր: Ես, հավանաբար, հարձակման պահին սարսափելի էի, տղամարդու պես հայհոյում էի. ընկերներս հետո ինձ զգուշավորությամբ էին նայում, պատմում էին, որ էդ կռվում տասից ոչ պակաս մարդ եմ պառկեցրել: Չեմ հաշվել: Ու հետո, երևի չարժի այդ մասին... Այո, եղել եմ և շարքային զինվոր, ու հանրապետության զինված ուժերի հրամանատարի տեղակալ: «Գնդապետ Ժաննա» երբեմն ինձ այսպես էին կոչում: Բայց ամենաշատը երևի՝ քույրիկ: Ու ազդականչերն էլ նույնը՝ մեղմ:

Դմիտրի Շևչենկո, «Դեմքեր» հանդեսի հրապարակումից

1992-ի ամառ: Թշնամին ընդհուպ մոտեցել է Ասկերանի մատույցներին: Ամեն օր, ամեն ժամ իրար շուրթերից լուրեր ենք պոկում: Ծանր ու օրհասական օրեր են: Պատահաբար քաղաքում աչքիս ընկավ մի հայտարարություն. Արցախի կանանց ջոկատ ստեղծելու համար հավաքագրում են կանայք ու աղջիկներ: Ի՞նչ անեմ: Գիտեմ, որ դժվար կլինի համոզել հարազատներիս, իսկ շրջապատում ամեն մեկը յուրովի կմեկնաբանի իմ քայլը: Անմիջապես հիշում եմ Եղիշեին՝ Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհի... Անդամագրվեցին 25 հոգի: Սկսվեցին պարապմունքները: Բոլորը չէ, որ դիմանում են: 25 հոգուց մնացինք 13-ը:

Մարգարիտա Թառանյանի զինվորական օրագրից

Իմ սիրելի ողջեր ու մեռածներ, ես կպատմեմ աշխարհին ձեր պատմությունը...

«Իմ միակ զենքը տեսախցիկն է: Նրա հետ եմ մտել պատերազմ, նրա հետ էլ դուրս կգամ: Այո, 1995-ի մայիսին ինձ տվեցին Ղարաբաղյան պատերազմի գնդապետի վկայական և նվիրեցին «Բերետտա»: Սակայն դա ինձ համար միայն հուշանվեր է, յուրօրինակ էկզոտիկա»:

Ցվետանա Պասկալևա, բուլղարացի լրագրող

Նա անցավ Ղարաբաղյան պատերազմի ճանապահներով, որպեսզի պատմի աշխարհին ողջ ճշմարտությունը նրա մասին, իսկ պատերազմից հետո մնաց Հայաստանում՝ ինչպես ինքն է ասում, Ղարաբաղի անկախությանը սպասելու: «Ես Ղարաբաղի իմ բոլոր ողջ ու զոհված ընկերներին խոսք եմ տվել, որ կմնամ, կտեսնեմ նրա ազատությունն ու անկախությունը ու դրանով կդնեմ իմ խրոնիկայի վերջին կետը»...

Աշխարհի բանակներում

. ՆԱՏՕ-ի երկրներում, դաշինքի բանակներում զինծառայողների թիվը վերջին հինգ տարում ավելացել է 10 անգամ և ներկայումս հասել ավելի քան 300 հազար մարդու:

. ԱՄՆ-ում բանակի և նավատորմի շուրջ 20%-ը կանայք են: Ավելի քան 11,2 հազար ամերիկացի զինծառայող կանայք մասնակցել են ՆԱՏՕ-ի խաղաղարար առաքելություններին, 37 հազարը՝ 1991 թ. «Փոթորիկ անապատում» գործողությանը: Ամերիկացի կանայք ծառայության ոչ մի սահմանափակում չունեն. նրանք ծառայում են նավերում, ծովային հետևակազորում, սակայն սուզանավերը մինչև վերջին ժամանակներս մնում էին բացառապես «տղամարդկանց թագավորություն»: Այս տարի արգելքը հանվեց, և 2011 թ.-ից ամերիկյան սուզանավերում կծառայեն կին սպաներ: ԱՄՆ-ն ամենևին էլ առաջին երկիրը չէ, որը կանանց թույլ է տալիս ծառայել սուզանավերում: Այս գործելաոճն արդեն գոյություն ունի Ավստրալիայում, Կանադայում, Նորվեգիայում, Իսպանիայում և Շվեդիայում:

. Ֆրանսիայում բանակի կանանց զորախումբը կազմում է մոտ 15%: Դա մոտավորապես ուսադիրներով 23 հազար կանայք են՝ շարքայինից մինչև գնդապետ, փաստորեն բոլոր զորքերում, բացի արտասահմանյան լեգեոնից, ծովային հետևակազորից և սուզանավերի անձնակազմից: 1995-ից նրանց թույլատրվել է վարել ամեն կարգի օդանավեր, այդ թվում նաև՝ մարտական: Այսօր կանայք կազմում են օդաչուների անձնակազմի 1,5%-ը: «Ֆիգարո» թերթի անցկացրած հետազոտության արդյունքներով՝ կանանց զինվորական ծառայության մեջ հրապուրում են ռոմանտիկան, մշտական, լավ վարձատրվող աշխատանք ունենալու ձգտումը, ընտանեկան կյանքի համար ընկեր գտնելու հնարավորությունը, ինչպես նաև ձգտումը՝ ապացուցելու, որ կանայք ի զորու են գլուխ հանել «տղամարդկանց» խնդիրներից:

. Բանակում ծառայող կանանց թիվն ամենամեծն է Իսրայելում: 18 տարին լրացած մինչև 24 տարեկան բնիկ իսրայելցի կանայք պարտադիր զորակոչվում են բանակ: Նրանք ծառայությունն անցնում են առանձին զորամասերում, որոնք միավորվում են հատուկ կանանց կորպուսում: Դրա թիվը կազմում է 36 հազար մարդ, և մարտական պայմաններում կանանց ստորաբաժանումները չպետք է գտնվեն հակառակորդի հետ անմիջական շփման մեջ:

. Իսպանիայի զինված ուժերում կանայք կազմում են անձնակազմի մոտ 20%-ը, ընդ որում, նրանք ծառայում են ոչ միայն բժշկական հաստատություններում կամ շտաբներում, այլև առանց բացառության բոլոր պաշտոններում, ներառյալ հրաձգային և օդադեսանտային ստորաբաժանումների, ծովային հետևակազորի մարտիկներ, հրետանային անձնակազմի, զրահամեքենաների վարորդներ, տանկիստներ և այլն:

. Հայկական բանակի տարբեր զորատեսակներում ներկայումս ծառայում են շուրջ 1500 կանայք, նրանց մեծ մասն ընդգրկված է պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատում և բուժծառայության ոլորտում:

Բանակում ծառայությունը քաղաքացիական պարտքի հատուցման բարձրագույն խորհրդանիշն է, ու քանի դեռ կանայք և տղամարդիկ հավասար չեն այդ սրբազան պարտքի առաջ, անհնար է խոսել նրանց իրական հավասարության մասին:

Դավիթ Բեն Հուրիոն

ԵՎՐՈՍՏԱՆԴԱՐՏ

Գենդերային հավասարությունը օրենքով և գործնականում. Ինչպե՞ս կարող ենք լրացնել այս բացը

Մոուդ դե Բյոր-Բուքիքիո
Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի տեղակալ

Չնայած տղամարդկանց և կանանց միջև հավասարությունը երկար ժամանակ Եվրոպայում քաղաքական գերակայություն է եղել, այնուամենայնիվ առաջընթացը դեռ դանդաղ է: Նույնիսկ եթե կանայք ունեն միևնույն իրավունքները, ինչ տղամարդիկ, նրանց հասանելի չեն այն բոլոր հնարավորությունները, որոնք հասանելի են տղամարդկանց, և հաճախ անհաջողության են մատնվում իրենց իրավունքները պահանջելու կանանց ջանքերը: Որոշ հարցերում, ինչպես, օրինակ՝ աշխատավարձի տարբերության հետ կապված (հաշվարկները ցույց են տալիս, որ այս տարբերությունը հասնում է մինչև 20%), մի շարք երկրներում նույնիսկ հետընթաց է գրանցվել:

Հավասարության մեկ այլ ավելի կարևոր ցուցիչ է կանանց քաղաքական մասնակցության մակարդակը. կանայք թեև համապատասխանում են սահմանված պահանջներին, բայց նրանց ներկայությունը, մի շարք բացառություններով, շատ աննշան է քաղաքական կյանքում: 2003 թ. Եվրոպայի խորհուրդն առաջարկեց, որ քաղաքական կամ հանրային կյանքում ցանկացած որոշում կայացնող մարմնում կանայք կամ տղամարդիկ ներկայացված լինեն ոչ պակաս, քան 40%-ով: Այնուհանդերձ, վերջերս հրապարակված մի զեկույց ցույց է տալիս, որ կին նախարարների թիվը միջինը կազմում է 28,6%, իսկ խորհրդարաններում կանանց ներկայացվածությունը միջին հաշվով 21,7%-ից ավելի չէ: Որոշակի առաջընթաց է գրանցվել 2005թ.-ից ի վեր, երբ նախարարների միայն 19,9% -ն էին կանայք, բայց իրավիճակը խորհրդարաններում չի փոխվել:

Ամենախտրական օրենքներն ու կանոնակարգերը բարեփոխվել կամ վերացվել են վերջին տասնամյակներին և դրական փոփոխություններ են կատարվել ի շահ կանանց: Սակայն կանայք միշտ չէ, որ ունեն միևնույն հնարավորությունները: Պատճառը կառուցվածքային և հասարակական խնդիրներն են՝ բռնությունը, քաղաքական և տնտեսական կյանքում մարգինալացումը, խտրականությունը աշխատանքի վայրում և մասնագիտական ու անձնական կյանքի համատեղման դժվարությունները:

Իրական գենդերային հավասարությունը չի վերաբերում միայն իրավահավասարությանն օրենքում, այլև նշանակում է, որ կանայք և տղամարդիկ ունեն հավասար նշանակություն, լիազորություններ, պատասխանատվություն և մասնակցություն հանրային և քաղաքական կյանքում:

Հավասարությունը անպայմանորեն չի նշանակում միևնույն ձևով վերաբերվել մարդկանց, այլ ընդհակառակը: Իրականում տղամարդկանց և կանանց միջև անհավասարության խնդրին պետք է մոտենալ տարբերակման քաղաքականության միջոցով: Վերջին տարիներին Եվրոպայում ներմուծվել են բազմաթիվ սկզբունքներ, ներառյալ «դրական գործողություններ»-ը, ինչպես օրինակ՝ քվոտաները, կանանց առանձնահատուկ կարիքներին ուղղված ծրագրերը, կանանց կրթությունը և գործարարությունը խթանող ծրագրերը: Դրանք համեստ արդյունքներ են բերում, բայց անհրաժեշտ է գնահատել դրանց ներգործությունը և մշակել նոր ծրագրեր, եթե գոյություն ունեցողները բավարար արդյունավետ չեն:

Մեզ անհրաժեշտ են առանձնահատուկ նպատակներով կոնկրետ գործողություններ, որպեսզի մեծացնենք կանանց մասնակցությունը որոշումներ կայացնող մարմիններում: Կանայք պետք է ֆինանսապես անկախ լինեն, և կառավարությունները պետք է երաշխավորեն, որ այս հավասարությունը հարգվի աշխատանքի շուկայում:

Մենք գերկանանց կարիք չունենք, ովքեր կարող են նույնքան ժամանակ տրամադրել աշխատանքին, որքան տղամարդիկ՝ միևնույն ժամանակ հոգ տանելով երեխաների և ընտանիքի մասին: Մենք ունենք հավասարության մշակույթի կարիք, երբ ընտանեկան պարտականությունները կիսվում են տղամարդկանց և կանանց միջև: Գենդերային հավասարության միջոցներ են անհրաժեշտ՝ օգնելու ծնողներին համատեղել մասնագիտական և ընտանեկան պարտականությունները՝ որակյալ ծառայությունների մատուցման և տնային պարտականությունների ու խնամքի հավասար բաշխման միջոցով:

...Կարծես թե գենդերային դերերի հարատևումը և մշակութային որոշ գործոններ խոչընդոտում են հետագա առաջընթացը: Փոփոխություն է անհրաժեշտ, մի փոփոխություն, որը հնարավոր է միայն կրթական համակարգի, ընտանիքների, լրատվամիջոցների՝ այս գործին լիակատար նվիրման միջոցով: Քանի դեռ պահպանվում են գենդերային կարծրատիպերը, խտրականությունը հարատևելու է, քանզի այսօր այդ կարծրատիպերը և ո՛չ թե օրենքներն ու կանոնակարգերն են խոչընդոտում կանանց առաջխաղացումը:

Տնտեսական և սոցիալական ներկա ճգնաժամի պայմաններում գենդերային հավասարության հարցերի նկատմամբ ուշադրության նվազման վտանգ կա: Դա սխալ կլինի: Գենդերային հավասարության սկզբունքները պետք է համարվեն ոչ թե ծախս, այլ ներդրում: Դրանք կարող են էական նպաստ բերել հասարակությանը՝ հնարավոր դարձնելով նրա բոլոր անդամների՝ ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց հմտությունների, կարողությունների և ստեղծագործական ներուժի լրիվ օգտագործումը:

Խտրականության դեմ պայքարը երկար ճանապարհ է, բայց մենք պետք է կրճատենք հեռավորությունը: Վերջերս Բարաք Օբաման փոխեց պատմությունը՝ դառնալով առաջին սևամորթ ամերիկացին, որը ԱՄՆ նախագահ ընտրվեց: Մի օր կլինի ԱՄՆ կին նախագահ, և սա կլինի կարևոր ուղենիշ: Եվրոպայում փոքրաթիվ կանայք արդեն ընտրվել են պետության կամ կառավարության ղեկավարների պաշտոնում:

Միայն մեկ անգամ է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի պաշտոնում կին ընտրվել: Ես առաջին կինն էի, որ ընտրվեցի Գլխավոր քարտուղարի տեղակալի պաշտոնում: Այն, ինչ թվում է անձնական մակարդակի ձեռքբերում, կարող է համարվել համակարգի ձախողումը: Ապագայում, երբ սենսացիոն նորություն չի լինի որևէ կնոջ ընտրվելը կամ նշանակվելը կարևոր պաշտոնում, կամ երբ կինը հասնի ինչ-որ նպատակի, որին տասնյակ տարիներով կամ նույնիսկ դարերով չեն հասել տղամարդիկ, կանանց և տղամարդկանց միջև հավասարությունն ավելի մոտ կլինի իրականությանը:

Տղամարդկանց և կանանց միջև հավասարությունն օրենքում և գործնականում մարդու իրավունքների և ժողովրդավարության անբաժանելի մի մասն է: Մենք չենք կարող թույլ տալ, որ հարատևի անհավասարությունը, քանի որ առանց հավասարության ժողովրդավարությունն ավարտուն չէ:

Մայիս 2010 թ.

ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Երազում եմ, որ մարդիկ կարդան իմ բանաստեղծությունները և իմանան... »

Հասմիկ Սինանյանի ոտանավորներից.

Մորս հիշեցի, սիրտս ճմլվեց,
Հիշում եմ՝ ինչպես ինձ դպրոց ճամփեց,
Հիշում եմ՝ ինչպես բոլորից թաքուն
Արտասվում էր նա մի ողջ իրիկուն,
Հիշում եմ՝ ինչպես նա ինձ համբուրեց...
Եվ իր մայրական խորհուրդը տվեց.
Գնա՛, ի՛մ բալիկ, խելացի՛ դարձիր,
Մեր տան օջախը դու անմա՛ր պահիր:
Սիրտս այրվում է, մա՛յր, քո կարոտից,
Հոգիս կարոտ է, մա՛յր, քո խորհրդին,
Իմ աչքերը թաց են մեր տան կարոտից,
Մա՛յր իմ անգին, քեզ շատ եմ սիրում,
Իմ ու քո սերը անծայր է թվում,
էլ չենք բաժանվի մենք ոչ մի դեպքում,
Թեկուզ դու լինես աշխարհի ծայրում,
Թեկուզ ես լինեմ փակ մի անկյունում,
Միևնույն է՝ ես քեզ անչափ եմ սիրում:

Հասմիկ Սինանյանը Նուբարաշենի թիվ 11 հատուկ դպրոցի այն սանուհիներից է, ովքեր խիզախություն ունեցան դատարանում ցուցմունքներ տալու և ի լուր ամենքի պատմելու, թե ինչ է կատարվել դրա պատերի ներսում: Նա միակն էր, որ չէր թաքնվում ֆոտոխցիկներից ու չէր փորձում թաքցնել իր անունը:

Հասմիկը բացարձակապես առողջ երեխա էր, երբ ծնողները, անապահովությունից մղված, նրան տեղավորեցին հատուկ գիշերօթիկ դպրոցում՝ նախատեսված մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաների համար: Տանն ուտելու բան չկար, իսկ դպրոցում, նրանք համոզված էին, իրենց աղջիկը կուշտ կլինի, հագնված... Մնացյալի մասին չէին մտածում:

Մտածում էր երկար տարիներ ինքը՝ Հասմիկը: *«Այստեղ միայն ես չէի այդպիսին: Շատ էին առողջները: Մի անգամ ստուգողներ էին գալու դպրոց: Մեզ ասեցին, որ պետք է ամենքս մի թերությունով ծնանանք: Ես պետք է լինեմ սկլերոզ, դալտոնիկ: Ստուգողները հարցեր էին տալիս, մենք էլ գժի պես նայում էինք կողքերս: Նրանք գոհ հեռացան»,-* պատմում է նա:

Խոսելիս նա նյարդայնացած կրծոտում է եղունգները, ու այս սովորությունը մատնում է ներքին ապրումները, որոնք այս ամբողջ տարիներին նա ջանացել է թաքցնել շրջապատից: *«Սիրում եմ մենակություն, ոտանավորներ եմ գրում, երազում եմ, երբեմն նույնիսկ խոսում ինքս ինձ հետ: Մի օր ընկերուհիս տեսավ, ասեց՝ Հա՞ս, էս մենակ-մենակ խոսո՞ւմ ես...Ամաչեցի»:*

Այսօր նա ավարտել է դպրոցը, բայց վախենում է նույնիսկ մտածել սովորելու մասին. հատուկ դպրոցի վկայականը խարան է ողջ կյանքի համար: *«Հիմա, երբ ավարտել եմ դպրոցը, մտածում եմ՝ ինչո՞ւ իմ հետ տենց բան պիտի լիներ, ինչո՞ւ պիտի խորտակվեի այդ դպրոցում, էլ չեմ ուզում սովորելու մասին խոսել, սաղ անցած կյանքս դեմս ա գալիս, ավաղ, գնացքս գնացել ա....Ոչ էլ լավ կյանքի եմ արժանի, ով եմ ես, որ ինձ բանի տեղ դնեն... ես արժեք չունեմ...»* - ասում է Հասմիկը, որն այնուամենայնիվ երազում է. ինչ-որ ժամանակ իր բանաստեղծությունները կտպագրվեն, և մարդիկ կիմանան, որ ինքը նրանց ու աշխարհի հետ կիսվելու և նվիրելու բան ունի:

Հ.Գ. Հասմիկի մասին մենք իմացանք Մարիամ Սուխուդյանից, որը, ինչպես հայտնի է, առաջին անգամ բարձրաձայնեց Նուբարաշենի դպրոցի սաների բողոքը՝ հայոց լեզվի ուսուցչի դաժան վերաբերմունքից ու սեռական ոտնձգություններից: «Նա, ով տարիներ շարունակ ապրել է այդ բանտային ռեժիմով փակ համակարգում՝ Նուբարաշենի գիշերօթիկ դպրոցում, չի կորցրել իր ուժեղ կամքն ու կյանքի հանդեպ սերը: Թույլ չտանք, որ նա իրեն միայնակ զգա, կոտրվի»,- գրում է Հասմիկի մասին Մարիամ Սուխուդյանը՝ կոչ անելով օգնել նրան ոտքի կանգնելու, ինքնավստահություն ձեռք բերելու և մոտեցնելու իր երազանքը:

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՂԵԿԻՆ

Տիկին պաշտպանության նախարար

Տարեցտարի ոչ միայն աշխարհի բանակներում, այլև պաշտպանության նախարարի պաշտոնում ավելի են շատանում կանայք: Էլ չենք ասում, որ պետությունների շատ ղեկավարներ օժտված են գլխավոր հրամանատարի իրավասություններով: Այսպես, ԳԴՀ կանցլեր Անգելա Մերկելը, որը դասվում է աշխարհի ամենաազդեցիկ կանանց շարքը, պատերազմի շրջանում ստանում է բունդեսվերի հրամանատար լինելու իրավունքը:

Կիմ Քեմփբելը 90-ականների այն հազվագյուտ կանանցից է, ով զբաղեցնում էր Կանադայի պաշտպանության նախարարի, իսկ ավելի ուշ՝ երկրի վարչապետի պաշտոնը: «Երբ առաջին անգամ եկա ՆԱՏՕ, այնտեղ էին ՆԱՏՕ-ի անդամ երկրների ու Վարշավայի պայմանագրի նախկին երկրների պաշտպանության նախարարներ: Պավել Գրաչովի հետ հանդիպման ժամանակ նա խիստ ընդգծված բարեկիրթ էր, սակայն ավարտից հետո ես շրջվեցի ու նկատեցի նրա հայացքը, որ կարծես ասում էր. «Աստված իմ, սա ի՜նչ բան էր»:

Այսօր կարելի է նշել առնվազն տասնյակ երկիր, որտեղ կանայք գլխավորում կամ գլխավորել են պաշտպանական գերատեսչությունը՝ Ֆրանսիա, Ճապոնիա, Չեխիա, Լատվիա, Լիտվա, Էկվադոր, Արգենտինա, Չիլի, Ուրուգվայ,. Իսպանիա...

Երևի թե Իսպանիան զարմացրեց առավել շատ: 37-ամյա Կարմե Չակոնը դարձավ աշխարհում առաջին պաշտպանության նախարարը, որը պաշտոնավարելիս երեխա ունեցավ: 2010 թ. ապրիլին նրան Իսպանիայի ռազմական գերատեսչության ղեկավար նշանակելը աշխույժ մեկնաբանությունների տեղիք տվեց: Ու ոչ միայն այն պատճառով, որ լինելով հղիության վերջին ամիսներում, պաշտպանության նախարարն ընդունում է շքերթներ, տեսչական այցելություններ կատարում Աֆղանստան, Լիբանան ու նախկին Հարավսլավիա, որտեղ տեղակայված են իսպանացի խաղաղարարներ: Ի վերջո, հղի կանայք, ովքեր շարունակում են բուռն քաղաքական գործունեություն ծավալել, արդեն հազվադեպ չեն նաև Հայաստանում, օրինակ՝ պատգամավոր Զարուհի Փոստանջյանը: Հետաքրքիր է մեկ ուրիշ բան, որ պաշտպանության նախարար դարձավ համոզմունքներով պացիֆիստ մի կին: Հարկ է նաև հաշվի առնել, որ դա տեղի ունեցավ մի երկրում, որտեղ Եվրոպայի ամենապահպանողական բանակներից մեկը դեռ 1981-ին փորձեց ֆաշիստական խռովություն բարձրացնել:

Մինչև պաշտպանության նախարարի պաշտոնում նշանակվելը Չակոնը (նա ծնունդով Կատալոնիայից է, որտեղ էլ ստացել է իրավաբանական կրթություն) եղել է պատգամավոր, բնակարանային շինարարության նախարար: Իսպանացի պահպանողականներն իհարկե զայրացան, բայց, ի վերջո, համակերպվեցին վարչապետ Ռոդրիգես Սապատերոյի հեղափոխական նշանակմանը, որի կաբինետում 17 նախարարներից 9-ը կանայք են: Իսկ բանակն ու գեներալական կազմը դժգոհություն չցուցադրեցին: Փոխարենը մամուլը ոչ մի կերպ չէր հանդարտվում. «Պատկերացնո՞ւմ եք. ռազմական զորավարժություններ են, նախարարը պետք է մասնակցի, իսկ նրա երեխայի կերակրելու ժամն է»: Իսկ Կարմե Չակոնը, ի պատասխան մեղադրանքների, որ թեժ կետեր իր գործուղումներով նա ռիսկի է ենթարկում երեխայի կյանքը, պատասխանում է. «Կարող եք դա համարել խտրականության դեմ պայքարի խորհրդանշան, որին Իսպանիայում աշխատանքի վայրում բազում հղի կանայք են ենթարկվում»: Բացի այդ, Չակոնի խոսքով՝ այցելությունների մասին որոշումն ինքն ընդունել է բժշկի հետ խորհրդակցելուց հետո, որն ուղեկցում է նրան այցերի ընթացքում: Ի դեպ, ծննդաբերությունը վաղաժամ էր, սակայն փոքրիկը, որին կոչեցին Միգել, լույս աշխարհ եկավ առողջ՝ գրեթե 3 կգ քաշով:

Կարմե Չակոնին քաղաքական գործունեությամբ ճանաչող մարդկանց վկայությամբ՝ նրա ամենաբնորոշ գիծն «ընդգծված ինքնակարգապահությունն է»: Այն օգնում է նախարարին շփվելու սպաների և գեներալների հետ և ղեկավարել նրանց: Որոշ փորձագետներ նրան համարում են երկրի վարչապետի ամենահավանական հաջորդ թեկնածուն:

Հավելվածը հրատարակվում է կանանց համար գլոբալ հիմնադրամի աջակցությամբ

Global Fund for Women

Խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
Ձևավորումը՝ Վահե Դիոնեսյանի